

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՇԵՍԱԿՑԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ
ГОСУЧРЕЖДЕНИЙ
АРМЕНИИ



UNION OF STATE, LOCAL GOVERNMENT
AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF
ARMENIA

«19» օգոստոս 2021թ.

N 64-01

**ՀՀ վարչապետ
պարոն Նիկոլ Փաշինյանին**

Հարգելի պարոն Փաշինյան

Մի քանի օր է, ինչ պաշտոնատար անձինք հայտարարում են, որ հոկտեմբեր ամսից չպատվաստված աշխատողներին պարտադրվելու է 14 օրը մեկ ՊՇՌ թեստ հանձնել:

Կառավարության մտադրությունը՝ ավելացնել պատվաստման տեմպերը տարբեր խթանող միջոցառումներ նախատեսելով՝ ողջունելի է: Սակայն գտնում ենք, որ աշխատողներին իրենց հաշվին ամիսը երկու անգամ թեստ հանձնել պարտավորեցնելն անօրինական է:

Աշխատանքային օրենսգրքի Հոդված 249-ի համաձայն՝

«Այն աշխատողները, ովքեր աշխատանքի վայրում կարող են ենթարկվել մասնագիտական ռիսկի գործոններին, պարտավոր են մինչև աշխատանքի ընդունվելը, իսկ աշխատանքի ընթացքում՝ պարբերաբար, անցնել բժշկական զննություն՝ գործատուի հաստատած ժամանակացույցին համապատասխան:

Գործատուն պարտավոր է հաստատել այն աշխատողների ցանկը, որոնք ենթակա են պարտադիր բժշկական զննության, և առողջությունը վերահսկող կազմակերպության հետ համաձայնեցնել բժշկական զննություն անցնելու ժամանակացույցը: Բժշկական զննություն անցնելու ժամանակացույցին աշխատողները ծանոթացվում են ստորագրությամբ:

Պարտադիր բժշկական զննումը կատարվում է աշխատանքային ժամերին՝ գործատուի միջոցների հաշվին»:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել սոցիալ-տնտեսական վիճակը հանրապետությունում, և այն, որ թեստի արժեքը նվազագույն աշխատավարձի մոտ 20%-ն է կազմում. նման որոշումը խորացնելու է սոցիալական լարվածությունը:

Կոչ ենք անում թեստավորման գործընթացը կազմակերպել Օրենքի սահմաններում:

Միաժամանակ գտնում ենք, որ թեստավորումը անհրաժեշտ է ավելի հաճախ անցկացնել, քանի որ 14 օրվա ընթացքում, մարդը կարող է հասցնել հիվանդանալ և վարակել շրջապատին:

Հարգանքով՝

**Հայաստանի պետհիմնարկների,
ՏԻՄ-երի աշխատողների
արհմիության նախագահ**

Ա. Ասատրյան